



Հայաստանի կենսաբ. հանդես, 4(69), 2017

ԿՈԿՈՇԵՆՈՒ ԵՎ ՀԱՂԱՐՁԵՆՈՒ ՄԵԱԿՈՎԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՄՆԿԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՐՑԱԽՈՒՄ

Գ.Գ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Արցախի պետական համալսարան
gayanegeorgevna1981@mail.ru,

Արցախում կատարված հետազոտական աշխատանքների արդյունքում (2014-2017թթ.) հայտնաբերվել ու իդենտիֆիկացվել են կոկոշենին և հաղարջենին ախտահարող 8 տեսակի մնկային հիվանդություն /ալրացող, անտրակնոզ, սեպտորիոզ, ժանգաստունկ, մոխրագույն և մոնիլիային փտում, ասկոխիտոզ, թառամում/:

Պարզաբանվել են նշված մնկերի զարգացման կենսաբանական առանձնահատկությունները, տեր-բույսերի ընկալունակությունը հիվանդածին մնկերի նկատմամբ և հարմարվածությունն Արցախի բնակլիմայական պայմաններին:

Արցախ – տեր-բույս – մակաբույծ մնկեր – մնկային հիվանդություններ

В результате проведенных в 2014-2017 гг. в Арцахе работ выявлено и идентифицировано 8 видов грибных болезней, поражающих крыжовник и смородину (мучнистая роса, антракноз, септориоз, ржавчина, серая и монилиальная гниль, аскохитоз, увядание).

Выявлены биологические закономерности развития указанных грибов, восприимчивость растений-хозяев по отношению к грибам-паразитам и их адаптация к природно-климатическим условиям Арцаха.

Арцах – растение-хозяин – грибы-паразиты – грибные заболевания

In 2014-2017, as a result of the research in Artsakh eight fungal diseases on the currant and gooseberry were identified. They are powdery mildew, anthracnose, septoriose, rust fungi, gray and monilia rot, Ascochyta disease and wilting.

The article reveals the biological peculiarities of the development of the mentioned fungi, the perception of host-plants on the pathogenic mushrooms and the adaptation to the climatic conditions of Artsakh.

Artsakh – host plants – parasitic fungi – fungal diseases

Մնկերի աշխարհում միկրոմիցետներն իրենց կենսաբանական առանձնահատկություններով յուրահատուկ խումբ են կազմում: Այս մնկերի ուսումնասիրությունը խիստ անհրաժեշտ է, քանի որ լինելով մակաբույծներ, դրանք հեշտությամբ վարակում են բազմաթիվ վայրի և մշակովի բույսերի, նվազեցնելով բերքատվությունը, դեղագործական և դեկորատիվ նշանակությունը, սննդային որակը, կերային արժեքը և այլն [1]:

Քանի որ Արցախի բուսական աշխարհը և բնակլիմայական պայմանները բարենպաստ են մակաբույծ մի շարք մնկերի զարգացման համար անհրաժեշտություն առաջացավ ուսումնասիրել նշված տարածաշրջանի մշակովի բույսերն՝ այդ թվում թփերն ախտահարող մնկային հիվանդությունները:

Հոդվածում ներկայացվում են կոկոշենու և հաղարջենու վրա մակաբուծող, Արցախում հայտնաբերված մնկային հիվանդությունների վերաբերյալ որոշ տեղեկություններ:

Հարկ է նշել, որ կոկոռնիսն և հաղարջենին հիմնականում վարակվում են նույն սնկային հիվանդություններով, բայց ի տարբերություն հաղարջենու՝ կոկոռնիսն վրա որոշ սնկային հիվանդություններն ավելի արագ են տարածվում և ինտենսիվորեն զարգանում, իսկ առողջ պտուղների և բարձր բերքի ապահովման նպատակով խիստ կարևորվում է ճիշտ ժամանակին սնկային հիվանդությունների տարածումը և կանխումը:

Նյութ և մեթոդ: Հետազոտման նյութ են հանդիսացել կոկոռնիս և հաղարջենի տեր-բույսերը՝ վարակված տարբեր սնկային հիվանդություններով: 2014-2017 թթ. մեր կողմից Արցախում իրականացված հետազոտական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել և իդենտիֆիկացվել են նշված տեր-բույսերն ախտահարող 8 տեսակի սնկային հիվանդություն, որոնք իդենտիֆիկացվել են սնկաբանական համընդհանուր մեթոդներով, օգտագործվել են բազմաթիվ որոշիչներ: Սնկերի անվանումները համապատասխանացվել են ժամանակակից կարգաբանությանը [2-7]:

Արդյունքներ և քննարկում: Հետազոտման նյութ հանդիսացող կոկոռնիս և հաղարջենի տեր-բույսերն ընկալունակ են մի շարք սնկային հիվանդությունների նկատմամբ, ինչպիսիք են ալրացողը, սեպտորիոզը /սպիտակ բծավորություն/, անտրակնոզը, ժանգասունկը և այլն: Վերջիններիս զարգացումը ոչ միայն նվազեցնում է տեր-բույսերի բերքատվությունը և ազդում բերքի որակի վրա, այլ կարող է հանգեցնել բույսի մասնակի կամ լրիվ ոչնչացման: Մակաբույծ սնկերի տեսակային կազմի բացահայտումը կարևոր և որոշիչ նշանակություն ունի դրանց դեմ արդյունավետ, ճիշտ պայթար իրականացնելու հարցում: Հայտնաբերված սնկերի զարգացման առանձնահատկությունների պարզաբանումը հնարավորություն կտա կազմակերպել դրանց դեմ արդյունավետ պայթարն ինչպես տվյալ վեգետացիայում, այնպես էլ հետագա տարիներին: Ստորև ներկայացվում են հայտնաբերված սնկային հիվանդությունների մասին մանրամասն տեղեկությունները:

1.Ալրացող – *Podospheera mors-uvae* (Schwein.) U.Braun & S.Takam., ընտանիք *Erysiphaceae*: Սունկն ախտահարում է տեր-բույսի տերևները և պտուղները: Հիվանդության առաջին ախտանշաններն ի հայտ են գալիս զարնանը բույսի ծաղկումից անմիջապես հետո: Մատուցվող ընծյուղները և տերևները ծածկվում են սպիտակ, խիտ փառով, որը սկզբում հեշտությամբ պոկվում է: Այնուհետև հիվանդությունն արագ զարգանում է և տարածվում պտուղների, ինչպես նաև ամբողջ թփի վրա: Վարակված ընծյուղները ձևափախվում են, խանգարվում է դրանց նորմալ աճը, երբեմն դիտվում է ընծյուղների մասնակի չորացում: Ախտահարված պտուղներն ամբողջությամբ պատվում են սպիտակ փառով՝ սնկամարմնով, որի արդյունքում դադարում է պտուղների աճը: Նման դեպքերում պտուղները կորցնում են դեղագործական, սննդային, արտադրական նշանակությունը և ապրանքային արժեքը: Հաճախ վարակված պտուղները պատռվում են և թառամում: Սնկամարմինը լցված է կլետոտեցիումներով, որոնք ունեն պարզ հավելումներ և 1 պայուսակ՝ ասկ: Գարնանը պայուսակները բացվում են և ասկոսպորները դուրս են գալիս արտաքին միջավայր, տարածվում քամու միջոցով՝ առաջացնելով հիվանդության նոր օջախներ: Հիվանդության զարգացմանը նպաստում է խոնավ սուբստրատը և ստվերոտ տարածքը: Չոր և շոգ եղանակային պայմանները համեմատաբար ճնշում են հիվանդության զարգացման ընթացքը: Նկարագրվող սնկի սպորները երաշտադիմացկուն և ցրտադիմացկուն են: Այդ պատճառով անհրաժեշտ է ալրացողի դեմ պայթարը սկսել վաղ գարնանը և շարունակել մինչև ուշ աշուն: Հակառակ դեպքում վարակի կրկնման արդյունքում 2-3 տարուց հետո թփերը կարող են ամբողջությամբ ոչնչանալ: Սունկն Արցախում տարածված տեսակ է: Հայտնաբերվել է հետազոտության բոլոր տարիներին Ասկերանի, Մարտունու, Մարտակերտի, Հադրութի շրջանների մի շարք համայնքներում և Ստեփանակերտ քաղաքում կոկոռնիս և հաղարջենու վրա:

2.Անտրակնոզ – *Drepanopeziza ribis* (Rehm ex Kleb.) Höhn., ընտ. *Dermateaceae*: Ոչ պակաս վնասաբեր սունկ է, քան ալրացողը: Ախտահարվում են հաղարջենու և կոկոռնիսն տերևները, որոնց վրա առաջանում են մանր, դեպի դուրս փքված, անկանոն, դարչնագույն կամ մուգ գորշավուն բծեր: Հիվանդության ինտենսիվ զարգացման ժամանակ բծերը միախառնվում են, տերևները գորշանում և չորանում, տերևաթիթեղները կնճռոտվում են և տերևների եզրաշերտերը կծկվում են դեպի վեր: Ախտահարված տերևները ժամանակից շուտ թափվում են: Հիվանդության օջախներ կարող են հայտնաբերվել նաև տերևակոթոնների, կանաչ ընծյուղների և պտղակոթոնների վրա: Վերջիններիս վրա առաջանում են խոցեր: Հիվանդ տեր-բույսերի ընծյուղների աճը կտրուկ դանդաղում է, ինչը բացասաբար է անդրադառնում բերքատվության և պտուղների որակի /բաղցրության նվազում/ վրա: Անտրակնոզի զարգացմանը նպաստում են տևական անձրևները, խոնավությունը առկայությունը: Հիվանդությունը սովորաբար տարածվում է ամռան կեսերին կոնիդիումների միջոցով: Անտրակնոզի նկատմամբ առավել ընկալունակ են կարմիր

հաղարջենու սորտերը, համեմատաբար քիչ են ախտահարվում հաղարջենու սև ու սպիտակ սորտերը և կոկոռնենու թփերը:

Drepanopeziza ribis սևիկի զարգացումն ընթանում է երկու փուլով՝ կոնիդիալ և պայուսակավոր: Կոնիդիալ փուլը սկսվում է ամռանը և վեգետացիայի ընթացքում տալիս է մի քանի սերունդ: Կոնիդիալ սպորակրությունը դիտվում է տերևների և այլ ախտահարված օջախների վրա սպիտակավուն փայլուն բարձիկների առաջացմամբ: Կոնիդիումները միաբջիջ են և անգույն: Սունկը ձմեռում է հիվանդ և թափված տերևների կամ այլ բուսական մնացորդների վրա: Գարնանը ապոտեցիումի տեսքով զարգանում է սևիկ պարկավոր փուլը և ձևավորվում են ասկոսպորները: Վերջիններս հարուցում են անտրակնոզի առաջնային վարակ: Կրկնակի վարակն իրականացվում է կոնիդիումներով, որոնք առաջանում են ախտահարված տերևների էպիդերմիսի տակ տեղակայված սևկամարմուն: Կոնիդիումների հասունացման արդյունքում տերևների վերին մակերեսներին առաջանում են վերափումներ, որտեղ էպիդերմիսը կոնիդիումների ճնշմանը չդիմանալով պատռվում է: Պատռվածքներից դուրս թռած կոնիդիումները հաճախ անձրևի կաթիլի հետ միաձուլվելով ախտահարում են նոր օջախներ: Վեգետացիայի փուլում մասսայական վարակի առաջացման և տարածման մեջ հիմնական դերը կոնիդիումներինն է: Հիվանդության դեմ պայքարը նույնականացվում է այրացողի դեմ կազմակերպվող միջոցառումների հետ:

Նկարագրվող սունկն Արցախում տարածված տեսակ է: Հայտնաբերվել է հետազոտության բոլոր տարիներին, հիմնականում Ասկերանի և Մարտունու շրջանների մի շարք համայնքներում, ինչպես նաև Ստեփանակերտ քաղաքում հաղարջենու վրա: Հայտնաբերվել է նաև 2016թ. Ասկերանի շրջանի Ակնաղբյուր և Ավետարանց գյուղերում կոկոռնենու վրա:

3. Սեպտորիոզ կամ սպիտակ բծավորություն - *Mycosphaerella ribis* (Sacc.) Lindau, ընտ. *Mycosphaerellaceae*: Ախտահարումներն /բծերը/ առաջանում են տերևների, ընձուղների, երբեմն նաև պտուղների վրա: Բծավորությունը դրսևորվում է տերևների վրա կլորավուն կամ անկյունաձև դարչնագույն բծերի առաջացմամբ, որոնք հետագայում սպիտակում են և մնում դարչնագույն եզրագծերով: Հիվանդ տերևների զույգ մակերեսներին նկատվում են սև պիկնիդներ՝ պիկնոսպորներով: Սպորներն անգույն են և թելանման, որոնց միջոցով ամռանը վարակը տարածվում է: Հիվանդության ինտենսիվ դրսևորման արդյունքում հաղարջենու և կոկոռնենու տերևները ժամանակից շուտ թափվում են և ճնշվում է բույսի աճը: Սևիկ ինտենսիվ զարգացումը կարող է ուղեկցվել կոկոռնենու թփի մերկացումով: Վարակն ընձուղների վրա արտահայտվում է երկարավուն ձգված բծերի առաջացմամբ, որոնք կենտրոնում ունեն բաց գունավորություն և եզրագծված են մուգ շերտով: Ախտահարված ընձուղների թերաճի արդյունքում նվազում է բերքատվությունը և պտուղների ապրանքային արժեքը: Հիվանդ պտուղների վրա դիտվում են փոքր, հարթ, գորշ բծեր, որոնք հետագայում սպիտակում են: Սունկը ձմեռում է սեպտորիոզով հիվանդ բուսական մնացորդների վրա: Աշնանը տերևների ստորին մակերեսներին առաջանում են բազմաթիվ փոքր պտղամարմիններ՝ պսևդոտեցիումներ /զարգացման պարկավոր փուլ/, որտեղ հասկերում հատուկանում են ասկոսպորները: Հիվանդության զարգացմանը նպաստում է խոնավ եղանակը, մեղմ ջերմաստիճանը և չորացող թփերը: Սեպտորիոզի մասսայական տարածում դիտվում է ամռան երկրորդ կեսին:

Սունկն Արցախում տարածված տեսակ է: Հայտնաբերվել է 2015-2016թթ. Ասկերանի, Մարտունու և Մարտակերտի, շրջանների մի շարք համայնքներում հաղարջենու և կոկոռնենու վրա:

4. Ժանգասունկ - *Puccinia ribesii-caricis* Kleb., ընտ. *Pucciniaceae*: Նկարագրվող սևիկ հարուցիչը կարող է ախտահարել տեր-բույսերի բոլոր օրգանները՝ տերևները, երիտասարդ չիվերը, ծաղիկները և պտուղները: Սևիկ ինտենսիվ զարգացումը նկատվում է բերքատվությունը և ազդում բույսի կենսագործունեության վրա:

Բույսի ախտահարված օջախներում ձևավորվում են նարնջագույն կամ դեղնագույն բծեր, որոնք առավել արտահայտված են լինում հիվանդ տերևների վրա: Վերջիններս վերին մակերեսին նկատվում է վառ գունավորությամբ օջախներ, որոնցում առկա են սև կետիկներ: Ախտահարված տերևների ստորին մակերեսներին տեղակայված են դեղին բարձիկներ՝ սևիկ սպորակրություններ, որոնք որոշ ժամանակ անց ստանում են փոքրիկ շիկների տեսք: Սևիկ զարգացմանը զուգընթաց փոխվում է ախտահարված օջախների գունավորությունը, այն դեղնավունից դառնում է դարչնագույն, այնուհետև գորշանում է, կենտրոնում ստանալով սպիտակավուն գունավորում: Ժանգասունկով հիվանդ տերևները ձևափոխվում են, ընձուղները՝ տերևազրկվում, ծամվում և չեն ձմեռում, իսկ պտուղների զարգացումն ախտահարված օջախում կողքային ճնշվում է: Միակողմանի զարգացման արդյունքում ձևավորվում են տձև պտուղներ, որոնց աճը դադարում է:

Ախտահարված օջախներում ձևավորվում են սնկի սպորները, որոնք տարածվելով առաջացնում են վարակի նոր օջախներ: Սպերմագոնիումները խմբերով են, տեղակայված են տերևների ստորին մակերեսներին, մեղրադեղնագույն են: Էցիդիումների կուտակումները համեմատաբար մեծ խմբերով են, որոնք տեղակայված են ցողունների, տերևների և հիմնական ջղերի վրա: Առաջացնում են կտրուկ արտահայտված ձևափոխություն: Էցիդիումները բաժանման են, դեղին, պերիդիումի ետ ծաված սպիտակ ծայրով: Էցիդիոսպորները կլորավուն են կամ բազմանկյուն, բաց նարնջագույն, մանր փշիկապատ: Ուրեդինիումները տերևների ստորին մակերեսներին են, օվալաձև են, փքված, բաց գորշավուն, երկար ժամանակ մնում են էպիդերմիսով ծածկված: Տելիումները տեղակայված են տերևների ստորին մասում, մուգ դարչնագույն են: Տելիոսպորները սովորաբար քորոցանման են, բաց գորշավուն, թաղանթը հարթ է, ոտիկը ամուր և դեղնավուն: Արցախում հազվադեպ հանդիպող տեսակ է: Իդենտիֆիկացվել է 3 անգամ /10.06.2014թ., 5.06.2015թ., 24.05.2017թ./ Ասկերանի շրջանի որոշ համայնքներում:

5. Ասկոխիտոզ – *Ascochyta ribesia* Sacc. & Fautrey, ընտ. *Didymellaceae*: Ախտահարվում են տերևները, որոնց վրա զարգանում են գորշ, սպիտակավուն կամ գունատ դեղնագույն և գորշ եզրագծված բծեր, որոնց կենտրոնում հետագայում առաջանում են թեթև ծալքավոր օջախներ: Այդ օջախներում հյուսվածքները չորանալով ճաքճքում և պոկվում են: Բծերը կարող են լինել կլորավուն կամ անկյունաձև և անկանոն դասավորության: Վարակած հատվածների վրա կան սև պինկիղներ, որոնք փոքր են և գնդաձև: Կոնիդիակիրներն անգույն են և ունեն պարզ կառուցվածք: Կոնիդիումներն էլիպսոիդալ են կամ գլանաձև, թույլ դեղնականաչավուն, ունեն թույլ ձգվածքով միջնորմ, երկբջիջ են՝ ծայրերում կլորացած:

Նկարագրված սնկով ավելի հաճախ ախտահարվում են կարմիր հաղարջի թփերը: Հիվանդության ինտենսիվ զարգացում է դիտվում ամռան կեսերին և շարունակվում է մինչև ուշ աշուն: Սունկը ձմեռում է ախտահարված բուսական մնացորդների վրա պինկիղների և պինկոսպորների տեսքով: Հիվանդության զարգացմանը նպաստում է բարձր խոնավությունը և տեր-բույսերի թույլ կենսագործունեությունը: Ասկոխիտոզի ինտենսիվ արտահայտվածությունն առաջացնում է հիվանդ բույսերի վաղաժամ տերևաթափ: Հիվանդությունն առաջին տարում բերքատվության վրա արտահայտված բացասական ազդեցություն չի թողնում, սակայն տարեց տարի կրկնվելով, նվազեցնում է բույսի կենսագործունեությունը, հետևաբար նաև բերքատվությունը: Սունկն Արցախում հայտնաբերվել է հետազոտության բոլոր տարիներին Ասկերանի և Մարտունու շրջանների մի շարք համայնքներում կոկոռչենու և հաղարջենու վրա:

6. Մոխրագույն բորբոսանման փտում – *Botrytis cinerea* Pers., ընտ. *Sclerotiniaceae*: *Botrytis cinerea* սնկով հիմնականում ախտահարվում են պտուղները դաշտում և պահպանման ժամանակ: Նկարագրվող սնկի վարակը դիտվել է ինչպես տեր-բույսի վեգետացիայի փուլում, այնպես էլ բերքի հավաքման, տեղափոխման և պահպանման ժամանակ: Ախտահարված պտղաթաղանթը հաճախ պատռվում է: Պտղափափկների վարակը հիմնականում սկսվում է պտղի և կոթունի ամրացման հատվածից կամ մեխանիկական վնասվածքով օջախից:

Հիվանդ պտուղները հարուցիչի թափանցման պահից սկսած արագ փափկում և ծածկվում են մոխրագույն փառով՝ սնկի կոնիդիալ սպորակրությամբ: Կոնիդիակիրներն ունեն վրձնանման ճյուղավորում, որոնց զազաթին առաջանում են կոնիդիումները /սպորներ/: Սպորները միաբջիջ են, անգույն և օվալաձև, երբեմն ձևավորում են սև կամ գորշ սկլերոցիումներ: Մեխանիկական վնասվածքներով, թույլ կենսագործունեությամբ և գերհասուն պտուղներն ավելի ընկալունակ են նկարագրվող սնկի նկատմամբ: Տաք և սառը ջերմաստիճանների անկանոն հերթափոխը համարվում է սնկի զարգացման հիմնական պատճառը: Սունկը տարածված տեսակ է, հայտնաբերվել է ուսումնասիրության բոլոր տարիներին Ասկերանի, Մարտունու, Մարտակերտի որոշ համայնքներում և Ստեփանա-կերտ քաղաքի պտուղ-բանջարեղենների վաճառակետերում:

7. Վերտիցիլիոզային թառամում – *Verticillium dahliae* Kleb., ընտ. *Plectosphaerellaceae*: Հիվանդությունը հանդիպել է ավելի շատ հաղարջենու, քան կոկոռչենու վրա: Ախտահարված թփերի աճը նկատելի տարբերվում էր առողջ բույսերից, վարակված տերևները գունատվում են, աստիճանաբար թառամում և երկար ժամանակ մնում են շիվերին կպած: Սկզբում թառամում են ստորին տերևները, այնուհետև վարակը տարածվում է երիտասարդ շիվերի վրա: Վարակվում են նաև պտուղները, որոնք թառամում և մնում են շիվերին կպած: Հիվանդության 2-3 տարի կրկնվելը հանգեցնում է բույսի ոչնչացման: *Verticillium dahliae* Kleb. սնկին բնորոշ հատկանիշ է տեր-բույսի հյուսվածքների գորշացումը: Ախտահարված շիվերի լայնակի կտրվածքում տեսանելի են բնափայտի նեկրոտիկ օջախներ՝ առանձին կետերի կամ ամբողջական օղակի տեսքով: Նկարագրվող սնկի հարուցիչը թափանցում է

տեր-բույսի հյուսվածքներն արմատների միջոցով: Վարակված բույսերը մահանում են, բախի որ հարուցիչի կողմից արտադրվում են թուլներ, որոնք խիստ բացասաբար են ազդում բույսի կենսագործունեության վրա: Բույսի սննդային նյութերի տեղաշարժը դեպի մատղաշ շիվեր դադարում է, որի արդյունքում առաջանում է բաղց և սով, արդյունքում վեգետատիվ ընձյուղները խեղդվում են, իսկ արմատային համակարգն աստիճանաբար գորշանում և չորանում է: Նկարագրվող սունկն ունի լայն ֆիլոգենետիկ մասնագիտացում և բացի հատապտղայիններից կարող է ախտահարել նաև պտուղ բանջարեղենային այլ մշակաբույսեր: Այդ բույսերի վարակված մնացորդների վրա սնկի հարուցիչը ձմեռում է միկրոսկլերոցիումների տեսքով և կարող է իր կենսունակությունը պահպանել 8-10 տարի: Միկրոսկլերոցիումներն աճելով առաջացնում են սևկամարմին, որը վարակում է տեր-բույսը՝ թափանցելով երիտասարդ արմատների մեջ: Սնկի ինտենսիվ արտահայտվածության դեպքում կարող է ոչնչանալ բույսի վերգետնյա զանգվածի 20-30 տոկոսը: Սունկը տարածված տեսակ է, հայտնաբերվել է հաղարջենու վրա ուսումնասիրության բոլոր տարիներին Ասկերանի, Մարտունու, Մարտակերտի որոշ համայնքներում, իսկ կոկոռչենու վրա հայտնաբերվել է 2015 թ. և 2017 թ. ամռան կեսերին՝ Ասկերանի շրջանի որոշ համայնքներում:

8. Սոնիլային փտում – *Monilinia laxa* (Aderh. & Ruhland) Honey, ընտ. *Sclerotiniaceae*: Ախտահարվում են պտուղները: Հիվանդ հատապտուղները գունատվում և թորչում են: Պտղաթաղանթը ճեղքվում է և ձևավորվում են բաց մոխրագույն բարձիկներ՝ սնկի սպորակրություններ: Սևկամարմինը թափանցում է պտղամսի մեջ և ժամանակի ընթացքում ախտահարված պտուղները չորանում են, մումիֆիկացվում և հիմնականում մնում են ճյուղերից կախված, իսկ որոշները կարող են նաև թափվել: Սոնիլային փտում սնկային հիվանդությունն ինտենսիվ տարածման արդյունքում կարող է հանգեցնել բերքի մասնակի կորուստի: Սնկի զարգացմանը նպաստում են տևական անձրևները և օդի բարձր խոնավությունը: Նկարագրվող հիվանդության վնասաբերությունն Արցախում զգալի չէ: Այն հայտնաբերվել է ուսումնասիրության բոլոր տարիներին Ասկերանի, Մարտունու, Մարտակերտի շրջանների մի շարք գյուղերում և հիվանդությունը մասսայական բնույթ չէր կրում:

Այսպիսով, չորսամյա հետազոտությունների ընթացքում հայտնաբերվել և պարզաբանվել է կոկոռչենու ու հաղարջենու վրա իդենտիֆիկացված մակաբույծ սնկերի զարգացման կենսաբանական առանձնահատկությունները, արտաքին գործոնների ազդեցությունը դրանց վրա, տեր-բույսերի ընկալունակությունը հիվանդածին սնկերի նկատմամբ և հարմարվածությունն Արցախի բնակլիմայական պայմաններին:

Հարկ է նշել, որ կոկոռչենու և հաղարջենու աճեցման, որակյալ ու բարձր բերք ստանալու, ինչպես նաև նկարագրված սնկային հիվանդությունների դեմ պայքարելու համար անհրաժեշտ է ոչ միայն մշակել ու բազմացնել թփերը, այլ նաև հատուկ խնամք իրականացնել, որն անպայման պետք է զուգակցվի ագրոտեխնիկական, կենսաբանական և քիմիական պայքարի մեթոդների կիրառմամբ:

Հետազոտությունն իրականացվել է ԱՀ ԿԳՍ Նախարարության կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության շնորհիվ՝ №SCS 15.10-003 «Մշակովի բույսերի սնկային հիվանդությունների ուսումնասիրությունը Լեռնային Ղարաբաղի տարածքում» գիտական թեմայի շրջանակներում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Արախամյան Ջ.Հ., Նանգոյան Ս.Գ., Ամիրյան Ա.Ա. Ֆիտոպաթոլոգիա. Երևան, 58 էջ, 2004.
2. Дьяков Ю.Т., Еланский С.Н. Общая фитопатология. М.: Издательство Юрайт, с.230, 2016.
3. Маркарян Г.Г., Нанагюлян С.Г., Согоян Е.Ю. Ржавчинные грибы полезных растений Нагорного Карабаха. Современная микология в России, М., 7, с. 74-75, 2017.
4. Попкова К.В. Общая фитопатология. М.: Дрофа. - 2005. - 445с.
5. Рахимова Е.В., Нам Г.А., Ермекова Б.Д. Краткий иллюстрированный определитель мучнисторосяных грибов Казахстана и приграничных территорий. Новосибирск, 129 с., 2014.
6. Mueller G.M., Bills G.F., Foster M.S. Biodiversity of fungi. London: Elsevier Academic press. 777 p., 2004.
7. <http://www.indexfungorum.org/names/Names.asp>

Ստացվել է 29.06.2017